ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 դեկտեմբերի 2024 թվականի N 198-Ն

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 190-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 13-Ի N 52-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՐԱԳՈՐԾԱԿԱՆ III ԴԱՍԻ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՐԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՎԱՅՐԵՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ, 37-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41.1-ին կետի, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի «Աբովյան համայնքի տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության իրականացման թույլատրելի վայրերը, պահանջները և պայմանները սահմանելու մասին» N 190-Ն որոշումը:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 13-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքում «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգը սահմանելու մասին» N 52-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետը, ինչպես նաև նույն կարգի մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ 1-ին կետից հանել «, տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու» բառերը:
3. Սահմանել Աբովյան համայնքի տարածքում կենցաղային նշանակության հրագործական III դասի և տեխնիկական նշանակության հրագործական արտադրատեսակների կիրառման թույլատրելի վայրերը՝ համաձայն հավելվածի:
4. Սահմանել Աբովյան համայնքի տարածքում կենցաղային նշանակության հրագործական III դասի և տեխնիկական նշանակության հրագործական արտադրատեսակների կիրառման թույլատրելի ժամ՝ 9:00-ից մինչև ժամը 22:00-ն:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -26 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱԲԱՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ
ՋԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ
ԱՌԱՔԵԼՅԱՆ ԹԱԹՈՒԼ
ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵԴԱ
ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ
ԲԱԴԱԼՅԱՆ ԱՏՈՄ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ՄԵԼԻՆԵ
ԳԵՂԱՄՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
ՋԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ
ԹԵՆԵՔԵՋՅԱՆ ԱՆԻ
ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ
ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱԻՐԻ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ
ՄԱՄՈՒԼՅԱՆ ՎՐԵԺ
ՄԵԼԻՔՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԵՂՐՅԱՆ ԱՐՄԱՆ
ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՍՊՈՒՐԱԿ
ՊՈՂՈՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ
ՍԱՐԳՍՅԱՆ ՊԵՏԻԿ
ՑՈՒԳՈՒՆՅԱՆ ՊԱՎԵԼ
ՔՈՍԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2024թ. դեկտեմբերի 24
ք. Աբովյան

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 3-ՐԴ ԴԱՍԻ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՐԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՎԱՅՐԵՐ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 196-Ն որոշման

ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ ՏԱՐԱԾՔ

Մ 1:1000

ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՄԱՐԶԱԴԱՇՏԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ
ԳՏՆՎՈՂ ՏԱՐԱԾՔ

Մ 1:1000